էինք քշում մեր միջից։ Նոր եփած կերակուրը կրակի վրայից վար առնելիս նոյնպէս խաչ են անում կաթսայի վրայ։ Շատ անգամ պատմել են ինձ, որ Վարդանլու, Զայդիտ, Օրարան, Բում և ուրիշ գիւղերի մահմեդականացած նշանաւոր ընտանիքներում կան նաև հայերէն լեզուով ձեռագրեր և տպուած գրքեր, որոնց պահպանում են մեծ խնամքով և զգուշութեամբ։ Շատ հետամուտ եղայ, շատ հարց ու փորձ արի 1881 և 1884 թ. խոստովանուեցին մեր մահմեդական եղբայրները, որ արդարև կան մի քանի անուանի ընտանիքներում հայերէն լեզուով «բեօհնայ քիթափլար»— հին գրքեր, բայց ինչ-ինչ պատճառներով՝ ցոյց չտուին ինձ։ Ընդհանրապէս մահմեդականացած գիւղացիք չափազանց մոլեռանդ են, բայց անչափ զգոյշ ու խորամանկ են օտար ու անծանօթին պատահած ժամանակ։ Անծանօթ այցելուի հետ խօսակցութեան միջոցին ճարպիկութեամբ մի՛շտ խոյս են տալիս նրանք՝ իրենց նախկին հայկական ծագման և քրիստոնէութեան մասին որևէ խօսք բանալուց։ Այսու ամենայնիւ, Ուտիացոց աշխարհի թրքացած գիւղերում անծանօթ այցելուն ամեն քայլափոխում կտեսնի հարազատ Հայոց տիպեր և գեղանի դէմքեր պարսկական տարազով զարդարուած։ Թրքացած Հայ գիւղացոց պարապմունքները, նրանց նիստ ու կացը և սովորութիւնները՝ գրեթէ Հայկականի պէս մի և նոյնն են։ Նրանց գլխաւոր պարապմունքն է երկրագործութիւն, պարտիզպանութիւն, անասնապահութիւն, շերամապահութիւն և բանջարաբու-